Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

5

ՂՈՂԱՆՋ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ

Աշունն էլի զբաղվում է ներկարարի իր փեշակով.
Նա օրն ի բուն աշխատում է,
Իսկ գյուղացին՝ հանգստանում,
Երբ աղունը տուն է գալիս
Ծանր սայլով կամ իշուկով,
Երբ աղվում է թթու-թուրշին,
Նորոգվում է ճոճկան քուրսին,
Ու չորացած ցան-փթիրը ամրոցի տեսք է ստանում:
Ամբողջ ամառ
Ջրի համար
Հոգի տվող հողը հիմա
Ծծողական թղթի նման
Կլանում է եղյամ ու թոն
Ու մեկ քրտնում, մեկ մրսում է:
Փխրուն գետինն աշնան ցրտի պա՜ղզ գաղտնիքով
Նորից իրեն, մումիայի պես, զմռսում է:
Ընկուզենին ու խնձորին

Իրենց խաշամն են ծալծլում հանդ ու ձորին՝
Նորահարսի փոթ-փոթ շորի
Ալիքավոր դարսի նման:
Լոկ փշատն է կարմրատակված կախվել ճութ-ճութ՝
Մեղվի գնդված պարսի նման:
Վերի-վերի, պարապ-սարապ ջահելի պես՝
Չի կարենում քամին մի տեղ տիտիկ անել.
Դես է վազում - դեն է թռնում,
Մերթ ուզում է ծերպի խորքը մտիկ անել,
Մերթ ծառի հետ կոխ է բռնում,
Քիթը կոխում ուր պատահի՝
Սափորի մեջ,
Հարս ու կանանց խորհրդավոր փեշերի տակ:
Լեռնաշխարհում աղբյուր-վտակ
Իրենց սնդիկ մարմնի վրա նորից հագնում են ապակի,
Մինչ տներում՝ ներսի տաքից՝
Ապակիներն ուրախությամբ լաց են լինում աննպատակ:
Ղավուրման է ամեն թոնրի
Աղ ներծծում ու ճարպ հալում:
Ամեն կողմից կանչում խաշի,
Հարիսա են անվերջ հարում:
Այստեղ՝ ծնունդ,
Այնտեղ՝ կնունք,
Աչքալույսի ժպտուն օրի:
Ամեն մատուռ՝ հավաքավայր,
Եվ ամեն վանք՝ ուխտատեղի:
Ու վանք տանող ամեն ճամփա ու սայլուղի
Նախշրվում են տեսակ-տեսակ ոտնահետքով.
Տրեխավոր, մաշիկավոր, բոբիկ ոտքով
Վանք են գնում

Հեռու-մոտիկ ամեն գյուղից:
Տան առաջնեկ գառը՝ կապված էշի վզից,
Առաջ վազում, կախ է ընկնում, շուրջը նայում,
Ու տանջվում է այն հարկադիր ու կեղծ հազից,
Որ անկասկած պիտի հնչեր իբրև մայուն...
Այնինչ ջորու մեջքին կապված
Զնգզնգացող սև կաթսայից՝
Ինչպես ասպետն իր զրահից՝
Մի զառ խորոզ,
Գոռո՛զ-գոռո՛զ,
Իր կատարն է մեկ դուրս հանում,
Մեկ՝ ներս տանում,
Եվ թափ տալով իր թևերը հրանման՝
Չիրկիզող կայծերի խուրձ
Ու բոցեր է ցրում իր շուրջ:
Եվ սայլերն են առաջ սողում՝
Լծից պոչուկ բեռնավորված
Աղմըկարար ճիժ ու պիժով,
Աման-չաման-կուլա-կժով,
Աչքերն ածուխ աղջիկների անծուխ բոցով,
Նորածընի օրորոցով:
Ու դալարուկ ճիպոտն ահա
Իր ազդեցիկ սուլ սուլոցով
Մինչև եզան մեջքը դաղի՝
Նախ երկնքի կապույտ երեսն է կտրատում՝
Երկրից ճայթած կայծակի պես:
Ոմանք՝ ուրախ,
Ոմանք՝ տրտում,
Սա՝ տխրադեմ-որբ ձագի պես,
Նա՝ ժպտերես ու բախտավոր,

Սա՝ կարմրաթուշ,
Նա՝ ախտավոր,
Եվ բոլորը՝ ուխտը սրտում -
Թը՛փ հա թրը՛փ,
Զը՛նգ հա զրը՛նգ,
Ճը՛ռ հա ճռի՛նչ -
Հասնում են վանք՝
Ուխտատեղի:
Եվ մոմերի ու կանթեղի
Բուրումնալից բոցն է ճթթում,
Ծաղկի նման փունջ-փունջ փթթում,
Ծաղկի նման վառ ու դեղին:
«Տե՛ր» են կանչում մի-մի բերան,
Մի-մի ծունը աղոթք անում,
Մատղացուի ոտ ու վզից
Արձակում են կապ ու պարան,
Եվ գավիթի սալարկը պաղ
Զոհի արյամբ է տաքանում...
Եվ հնչում է դհոլ-զուռնան,
Որ վանքերը հնամենի,
Մատուռները մեկեն դառնան
Խրախճանքի արբշիռ ու ցոփ հրապարակ:

ՂՈՂԱՆՋ ԽԱՂԿԱՊԻ

Ու տեղներից վեր են թռչում
Թիկունքը լայն - մեջքը բարակ
Բոյը թիլ-թիլ,
Բեղը ծիլ-ծիլ
Զահել տղերք,

Տղամարդիկ մացառմորուք,
Կուրծքը՝ փոչոտ,
Դեմքերն՝ այրված,
Աչքերն՝ այրող,
Հագած-կապած՝
Որը քաթան կամ շալ-շապիկ,
Որը չուխա կամ արխալուղ,
Բրդե գոտիկ, արծաթ քամար,
Իսկ զոլավոր և կամ պուտ-պուտ գուլպաներին՝
Խոռոմ սապոգ, մազե քոշեր,
Սև կարիճի պոչի նման կեռքիթ տըրեխ:
Վեր են ցատկում, գալիս շարվում իրար կողքի,
Եվ թուխ-թանաք և պատ-կտրիճ տղամարդիկ
Պարսպվում են ու բըրգանում:
Սկսվում է բոլորպարը:
Ծանըր քայլքով,
Անեղանակ-աներգ-անծափ,
Բայց համաչափ,
Երկու շրջան բոլորում են, պտույտ տալիս
Ինչ-որ զգույշ ու կարկամած,
Հետո քայլքը արագացնում կամաց-կամաց:
Պարագլուխ ձայնեղ տղան խաղ է կապում.
-Փեշդ եմ ընկել, Աստվածածի՛ն...
Խումբը բռնում վերջին բառից ու ձգում է.
-Աստվածածի՛ն...
Իսկ հողեղեն Աստվածածնի անմատչելի կախարդանքով
Աղջիկները ծուլ-ծուլ տալիս,
Մոտ են գալիս,
Բայց չեն մտնում պարաշրջան:
Իր խաղկապն է խաղասացը առաջ տանում.

-Ա՛խ, ջանեջա՛ն,
Բարով հասնեմ իմ սիրածին...
Խումբը բռնում վերջին բառից ու ձգում է.
-Իմ սիրածի՛ն...
Լայնանում է պարաշրջանն ամեն րոպե,
Դհոլն անվերջ շարունակում է տրոփել,
Հանգույցներ է տալիս զուռնան՝
Եղանակն է կոտորակվում,
Իսկ դհոլը՝ սպառնալով՝
Այնուհանդերձ չի տրաքվում:
Հետո նվագն արագ-արագ,
Փշուր-փշուր կուտակվում է,
Ձիգ է տալիս,
Վրա գալիս,
Եվ թե մեկ էր՝ չորստակվում է.
-Ա՛խ, թե չառնեմ,
Ես կմեռնեմ...
Ու կոպտալի թակութակից
Մինչև անգամ փուչ դհոլի անմազ դեմքն է փշաքաղվում,
Իսկ զուռնայի ծակուտակից
Արցունքներն են կարծես շաղվում...
Պարեկների ողկույզ-ողկույզ մազերի մեջ
Մոլորվում է մեղվի նման բզբզացող աշնան քամին
Կամ պլլըվում նայողների վիզ ու լանջին՝ չխայթելով.
-Քամին զանա,
Ծոցըդ բանա...
Հարս ու աղջիկ, ջահել կանայք
Դեռ չեմուչում, նազ են անում
Ու չեն մտնում պարաշրջան.
-Ե՛կ, ջանեջա՛ն...

Հետո արդեն չեն դիմանում
Ոսկորների ու հոդերի տանջող ցավին,
Ու հնչում է մի ձևացո՞ղ,
Թե՞ ամաչկոտ թուլ-թուլ ծիծաղ:
Իսկ երբ տեղից մեկը պոկվում
Ու թռչում է պարաշրջան.
-Ա՛յ, ջանեջան...
Մյուսներն էլ
Լորերի պես քլթիկ-մլթիկ՝
Հետևում են ողջ երամով:
Եվ արևի համ ունեցող,
Չորեքդիմաց ծամ ունեցող,
Մեջքակոտոր, ծնկածալիկ,
Ծոցվոր,
Բոցվոր,
Խնկածաղիկ,
Խունջիկ-մունջիկ
Հարս ու աղջիկ՝
Սիրո հրշեջ - սիրո հրձիգ՝
Տասի համար անգութ դահիճ,
Մեկի համար խոնարհ ծառա,-
Ճակատներին բոլոր «շահի»
Ու մեջքներին ոսկե քամար,
Արեգակից շատ ավելի
Կարմրատակած իրենց շողքից,-
Շաղ են գալիս ծլընգոցով,
Հետո շարվում իրար կողքի՝
Ինչպես անտես թելի վրա
Հազարերանգ հուլունքի ծոր:
Պարաշրջանն է լայնանում,

Եվ փոխեփոխ՝
Հանգույց-հանգույց, օղակ-օղակ՝
Երգ են կապում աղջիկ-տղա:
-Ի՞նչ ես կտոր-կտոր գալիս,
Ականջ արա բան եմ ասում,-
Պարագլխի ձայնն է հոսում:
Խումբը խլում ու ձգում է.
-Ա՛յ յարե ջան:
-Երբ խոսելու տեղն է գալիս,
Խոսկան տղի թութակ լեզուն...-
Մի աղջիկ է շուտ սկսում:
Օգնություն է խումբը տալիս.
-Ա՛խ, մարե ջան...
-...Խոսկան տղի թութակ լեզուն
Սերից էրված խաղ է ասում,-
Տղան նրա խոսքն է կիսում:
-...Չէ՛, բերնի մեջ լեզուն ասես
Կոտրվում է բանալու պես,-
Ծամկտրածն է տղին կիզում:
Խումբը՝
-Հա՛-հա՛, հե՛-հե՛, հա՛-հա՛,-
Քըրքջում է:
Ու թըռչում է:
Իսկ ջահելը թեպետ դաղվում,
Բայց և ուշքն է գլխին ժողվում,
Ու երբ նորից հերթն է գալիս,
Պատասխան է մի կերպ տալիս.
-Էրված սրտով եկել եմ ուխտ,
Որ պաղ սրտիդ անեմ մեկ թուղթ...
-Սեղան պաչեմ մեկ-մեկ ու ջուխտ,

Որ չբռնի ինձ գիր ու թուղթ...
-Օրոր-շորոր ով քեզ տեսավ՝
Հաց ու ջրից կկտրվի...
-Հերի՜ք փչես, ա՛յ շան փեսա,
Դալար շի՜վ եմ՝ չե՛մ կոտրրվի...
-...Հաց ու ջրից կկտրվի,
Կգա ձեր տուն՝ դառնա մշակ...
-...Դալար շի՜վ եմ՝ չե՛մ կոտրրվի,
Սուտ խոսելն ես շինել փեշակ...
Խումբը նորից է խառնըվում
Իր գոչերով
Ու կոչերով.
-Դե, թը՜ռ-թըռի՛,
Հո՜պտա-տըմբա՛:
Եվ դհոլչին ու զուռնաչին
Նվագում են թունդ Թոնոց-ին:
Եղանակը ծալծլվում է
Դարսվում իրար՝ ալիքի պես,
Եվ փրփուրը կայտառության
Պղպըջում է ջահելների գժված սրտում:
Նույնիսկ պարին չմասնակցող
Նախանձ կանանց բերանի մեջ
Սև ծամոնը՝
Օգտըվելով հիացմունքի ազդու պահից,
Հանգստանում-շունչ է քաշում՝
Ատամների հետքով կնքված իրավունքով:
Սրա վզի «նապոլեոն»-ի,
Նրա մեջքի արծաթ գոտու
Շողքն է ընկնում վանքի պատին
Կամ դհոլչու նեղ ճակատին,

Հետո չքվում չաղ զուռնաչու չռված աչքում:
Կրակ կըտրած կաղ դհոլչին
Հսկայական իր կոպալով
Եղանակը ետ է կծկում.
Ու զուռնաչու թշերն ուռած
Փուքսի նման իջնում են ցած,
Եվ աչքերը, որ խմիչքից ու զոռ տալուց
Լայնացել են ու կարմրրել՝
Գութան քաշող եզան հսկա աչքերի պես,
Հիմա նորից
Ստանում են մարդկայինի տեսք ու շնորհք...
Իսկ գավիթի պարսպից դուրս՝
Դարձյա՛լ նվագ, պարեր ու տաղ,
Մանրիկ ժպիտ, զնգուն ծիծաղ,
Շիվ տված սեր,
Ծլած հույսեր,
Երազների,
Մուրազների
Լուռ թևածում,
Կարոտներից ծանրած հոգու թեթևացում:
Այստեղ
Հորթուկ զույգ պատանի
Կոխ են բռնել՝
Ավագների հրահրոցով.
Այնտեղ՝
Թաքուն՝
Մի մատանի
Սիրած տղի ձեռքով դողդոջ
Չափսի գալիս սիրած յարի մատի վրա
Ու վառում է մատն իր բոցով:

Այստեղ՝
Ծերեր, որ մանկացած
Վեգ են խաղում կամ ներկած ձու:
Այնտեղ՝
Ջաղու պառավների
Ասեկոսե ու մերկացում:
Նոր ժամանած ուխտավորներ
Վանքի ներսում, վանքի առաջ.
Դեռ չզոհված հորթի տրտինգ,
Ու երինջի վերջին բառաչ.
Դեռ չմորթված աքլորների
Անժամանակ զիլ ծուղրուղու:
Իսկ այս կողմում՝
Լարախաղաց
Ու վազվզող մի ծաղրածու,
Եվ մի քամի, որ չգիտես՝
Ծաղրածուին կապկո՞ւմ է, թե՞ տնազ անում.
Գլխիկոնծի-գլխիկոնծի՝
Գժուկի պես թավալվում է, փոշի հանում,
Հետո, հանկարծ, թափ է տալիս կեղտ ու փոշին
Կիրակնօրյա հագուստներին տղամարդկանց
Կամ ձեռքերն է շուտ մաքրելու սուտ փորձ անում՝
Ջահել կանանց ազդրերին քըսմըսելով...
Վանքի շուքն է մեկ երկարում - մեկ կարճանում,
Ասես կրիա մի վիթխարի՝
Մերթ շոգելով - մերթ մրսելով՝
Իր գլուխն է սև զրահից դանդաղ հանում
Ու ներս տանում:
Իսկ լեռները՝
Նույնպես իրենց ստվերներով,

Որ ձգվում են հետզհետե,
Ասուլիսի թունդ սիրահար կանանց նման
Մոտենում են լուռ, թաթերին,
Նայում պիշ-պիշ...
Եվ մինչ խարույկ-օջախների
Անբոց շեղջերն են մարմըրում,
Մատղացուի նման զոհված արեգակի արյամբ բոսոր
Երկնի ամպերն են կարմըրում:
Մութն այլևս չի ընկրկում բամբ ձայներից,
Որ մնջում են՝ չուզենալով,
Կամաց-կամաց:
Եվ լռություն մի վիթխարի,
Նախ դողեղող ու կարկամած,
Հետո քիչ-քիչ սիրտ առնելով՝
Մոտենում է, ծանըր թառում
Շշմած վանքին ու ձանձրացած սար ու քարին:
Եվ ոչ մեկը,
Բացի գուցե մի անմարմին-ներողամիտ հրեշտակից,
Եվ ոչ մեկը չի նկատում,
Որ կարճմորուս մի անծանոթ,
Բերանքսիվայր պառկած կտրին դիմացի տան,
Ողջ ժամանակ աչքը՝ նրանց
Եվ ականջը՝ եղանակին,
Անափ սրտում՝ հիացմունքի ծփան մի ծով,
Սեղմ շրթերին՝ երանելի-շաղված ժպիտ,
Նրանց երգ ու նվագին է ականջ դնում ինքնամոռաց,
Եվ մատիտը ու թուղթն առած՝
Նկարո՞ւմ է,
Թե՞ գրում է
Ինչ-որ նախշեր ծուռտիկ ու ծուռ՝

Նման կարծես այն գրերին,
Որ գրբացն է թուղթ անելիս միշտ գծմրծում:
Ո՞ր գյուղացու,
Ո՞ր միամիտ-աստվածավախ շինականի մտքով կանցներ,
Թե հոգևոր
Ու կարգավոր
Մի վարդապետ բեղ-մորուքով
Վանք է եկել՝ վանք չի մտել.
Վանք է եկել, բայց ո՛չ ուխտի,
Ո՛չ քարոզի կամ օրհնության,
Այլ հեթանոս ու կռապաշտ
Դատարկ-մատարկ խաղ լսելու,
Որ կապում են աղջիկ-տղա,
Լակոտ-լուկուտ,
-Մե՛ղա քեզ, տէ՛ր...

ՂՈՂԱՆՋ ՁՄԵՌՆԱՄՈՒՏԻ

Աշունն անվերջ խորանում ու խորանում է:
Արագածն ու Մասիսներն են արդեն ձնել:
Մինչ տանիքին արքաղն արդյոք չորանո՞ւմ է,
Թե՞ թացանում շաղոտ-ցողոտ առավոտից
Եվ իրիկվա եղյամաշունչ խոնավ օդից,
Նույն այդ պահին նկուղներում ու մառանում
Կախանները սրսրփալով
Սեղմվում են,
Կպչում իրար՝
Իրենց ճխտուն՝ առանց այն էլ նեղ շարանում:
Այնպես հաստ է սերակալում մածունն արդեն,
Որ գդալը պիտի խրես բահի նման,

Բայց իր տեսքով հիմա ամեն մի մածնաման
Տեսնողի մեջ իսկույն սարսուռ է հարուցում:
Իսկ զարս-կարագն անգամ հարուստ տան խնոցու
Երեկ՝ հսկա դդմի նման,
Այսօր՝ դառնում հազիվ մի ձու,
Փոքրանում է՝ անհետանալ շտապելով:
Եվ մանրամաղ ուշ անձրևներ վար թափելով՝
Պատրաստվում է երկինքն արդեն
Ձնով նախշել գետինը պաղ:
Բարակում են, դառնում ճապաղ
Ծիծղուն աղբյուր, ցատկան վտակ:
Օրըստօրե՝ պատերի տակ
Էլ ո՛չ նարդի չխկացընել,
Ո՛չ էլ խաղալ վեգ ու դամա.
Արդեն կարգին ցուրտ է հիմա:
Եվ ներկարար աշնան հետքով
Ինքը ձմեռն է մոտենում:
Ինքնավստահ, ծանրաբարո՝
Վարագուրված երկինքներից
Դանդաղորեն իջնում է ցած,
Անցնում, գալիս սար ու քարով,
Նստում ծանրը ու պնդանում
Եվ անշտապ մի լրջությամբ
Զբաղվում է սա էլ արդեն... նկարչությա՛մբ,
Նկարչությա՛մբ,
Որ մեկ գույն է լոկ ընդունում:
Երբ արևը ցույց է տալիս իրեն մեկ-մեկ՝
Սակավ, ինչպես թույլ ժպիտը
Հիվանդ դեմքին մի աղքատի,
Սկսում են սառույց ու ձյուն դառնալ կաթիլ,

Սկսում են, բայց և իսկույն
Իրենց սխալն իրենք զգում,
Շար են շարվում սրա-նրա տան ճակատին,
Ջրհորդանի շիլ երկաթին,
Եվ - թե ինչպե՞ս՝ չե՛ս նկատի -
Ամենուրեք
Ու հատկապես եկեղեցու բարձր պատից
Կախ է ընկնում սառցի լուլան՝
Մեկը մեկից երկար ու լայն՝
Երեխեքի ախորժակը բաց անելով:
Կախ է ընկնում և - ըստ տատի -
Ճերմակ Դևի դիտմամբ չոված մատների պես
Երեխեքին ահ է տալիս՝ չանչ հանելով,
Որ փայտ-քարով ցած չգցեն,
Վերցնեն ծծեն,
Թե չէ՝ կապույտ հազ կկպչեն...
Երդիկներն են, որ ամեն օր լուսածագին
Թոնիրների ծուխն են անվերջ երկինք փնչում,
Իսկապես որ կարծես շնչում
Խոր քուն մտած Սև Դևի պես:
Ու երբ ձմռան անծայրածիր սպիտակին
Մարդիկ իրենց մժեղային սևն են խառնում՝
Տաք տներից ելնում են դուրս ու, խևի պես,
Ո՞ւր են գնում - ո՞ւր են դառնում՝ չես ըմբռնում,
Եվ իրենց իսկ շունչն է իսկույն եղյամ դառնում
Իրենց փոչոտ-թավ բեղերին,
Որ սարյակի թևերի պես
Մեկնըվում են տարբեր կողմեր,-
Հենց ա՛յդ պահին,
Նո՛ւյն ժամանակ

Սառնամանիքն է ինքնակամ կարգվում հսկիչ,
Ու պահակ են դառնում անվարձ
Ամեն տեսակ պաղ-պաղ հողմեր...
Իսկ աղքատի դատարկ գոմում
Մսրան պատի քարերն ամբողջ
Այնպես առատ են եղյամում,
Որ աղասեր ու դեռ անփորձ
Հորթ ու երինջ
Եղյամը ջինջ
Մոլորությամբ կարծելով աղ՝
Լիզմըզում են ու ի՜նչ. ավա՛ղ,
Լեզուն քաշել են շտապում
Ծանոթացած
Այն սրտփորիկ-կեռակտուց զգացումին,
Որ այդպես էլ չեն իմանա,
Թե կոչվում է հիասթափում...
Տարվա այս ուշ եղանակին,
Երբ դեռ վաղուց՝ աշնան տաքին
Հարկավորը աղել,
Մաղել,
Ավելցուկը հորում թաղել,
Սարքավորել,
Կարգավորել,
Կժի ճաքին,
Շորի ծակին
Կիր են դրել ու կարկատան.
Երբ տանիքի ծուռվիզ դեզի
Անգամ տեսքից մարդ է մրսում,
Մինչդեռ այդ նույն դեզի ներսում,
Ձյուն-սառցի տակ

Այնպես է տաք,
Ինչպես մարմինն անթև ճուտի,
Կարծես վաղուց՝ ամռան մուտին,
Դրսում գերել,
Այստեղ բերել
Ու պահում են ձմռան համար
Մի պատառիկ ջերմին ամառ
Եվ մի բաժին անուշ գարուն՝
Ծիածանի գույներ պահած իր խոտերով,
Իր զմրոսված ծաղիկների ծով հոտերով.
Տարվա այս ուշ եղանակին,
Երբ կոշտապատ ձեռք ու բազուկ
Հանգստանում փոքրիշատե
Ու դառնում են մի քիչ նազուկ.
Տարվա այս ուշ եղանակին,
Երբ բահը թանկ, եղանն անգին,
Լուծը երկար, սամին թզուկ՝
Մի անկյունում,
Իրար գլխի,
Պարապ-սարապ՝
Վերևից են նայում հիմա խեղճ թիակին,
Որով անվերջ պետք է բակի
Ու կտուրի ձյունը սրբել,-
Տարվա այս ուշ եղանակին
Էլ գյուղացուն ի՞նչ է մնում,
Թե ոչ երգե՛լ, պարե՛լ, հարբե՛լ,
Ժամանակն է սուրբ պսակի,
Մեկ-տասնըմեկ հարսանիքի...

ՂՈՂԱՆՋ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Արդար լույսը դեռ նոր բացված՝
Թագվորահոր տան տանիքին
Զուռնան գլում է Սահարի
Եվ հեռավոր ու թաղական,
Ազգ-ազգական,
Գյուղ-գեղովի
Հավաքվում են կամաց-կամաց
Ուրախության մի ժողովի,
Որին թող որ Աստծու կամքով
Արժանանա ամեն օշախ:
Ու զուռնայի փողն է դառնում
Թե՛ աշ ու ձախ,
Թե՛ վար ու վեր:
Մարդիկ օղուն գինին խառնում
Ու մոռացած դարդ ու ցավեր՝
Հանձնվում են ուրախության:
Ե՛վըս մի փարչ չափից ավել,
Ե՛վըս մի գավ թունդից ըմպում՝
Ու սիրտն ի սեր անկախության
Գլխի դեմ է ապստամբում:
Իբրև ազդու քաշալերանք՝
Գոռ դիոլն է անվերջ դմբում,
Ու կորչում է ամեն վարանք.
Պար են մտնում արդեն նրանք՝
Մինչև մի պապ կամ մի նանի,
Մոլությունից նրանց հանի.
-Տո՛, կսպասե՞ն հարսի հերանք...
Եվ աղմուկով, ուրախ-զվարթ աղաղակով,
Գլուխները նվագից ու խմիչքից տաք,
Իրար խառնած խոսքեր քնքուշ ու բիրտ կատակ՝

Թագվորահոր տան լի բակով,
Կալատակով,
Հոծ ամբոխը հարսնահյուրի
Գյուղամիջով հեղեղում է խնամոնց տուն:
Դհոլ-զուռնի խենթ նվագն է անվերջ թնդում:
Եվ դհոլչու ու զուռնաչու առջևն ընկած
Կրակ կտրած երիտասարդ մի թխադեմ՝
Թագավորի սրտամոտիկ մակարներից,
Լող է տալիս գետնի վրա՝ զույգ ոտներով,
Մինչ ձեռները օդի մեջ են թիավարում:
Մերթ՝ պպզում,
Ասես հոգնած է՞լ չպիտի տեղից ելնի,
Վեր է ոստնում մի պահ հետո
Եվ մի ոտը կեռած օդում՝
Տնկվում է նա մյուսի վրա,
Ապա արդեն երկու ոտով
Քայլ է անում մանր ու մոտիկ,
Վազ է տալիս արագ-արագ,
Վազ է տալիս ոչ թե առաջ,
Այլ նույն տեղում դոփդոփելով,
Հետո քայլը զգուշորեն այնպես փոխում,
Իր ոտները չի կամենում ասես թրջել
Աներևույթ ջուր ու ցեխում:
Ու մի վայրկյան նայում է դուրս
Ձմեռային արփին քնկոտ,
Ասես զարթնած այդ զուռնայի ձայնից վայրի,
Եվ ապակու ինչ-որ բեկոր՝
Ափսոսանքով ջարդված մի շիշ կամ աղաման,
Պսպղում է կեղտաջրում՝
Ցերեկային ու երկրային աստղի նման:

Պար է պարում հիմա արդեն
Մի շորորուն-զրինգ պառավ՝
Թագավորի մի մորաքույր կամ քեռակին,
Եվ կարծես թե յուղ են ածում
Ուրախության թեժ կրակին.
Ծափ ու ծիծաղ,
Սուր-սուր խոսքեր,
Որ չեն պահում վիրավորանք...
Ա՛խ, Վարդապե՛տ,
Այսպես սրանք
Երգ ու տաղով,
Պար ու խաղով
Պիտի հասնեն խնամոնց տուն,
Պիտի այնտեղ ուրախ կոնծեն,
Պիտի ուզեն հարսի խոնչեն,
Պիտի պաչեն պառավներին
Ու հագուրդ տան ծարավներին
Վառ օղիով, գինին՝ ավել:
Ա՛խ, Վարդապե՛տ, այնտեղ նրանք,
Ըստ ընդունված սովորույթի՝
Դեռ կսարքեն անմեղ դավեր.
Կգողանան թմբլիկ հավեր,
Աքաղաղներ զառ ու գիրուկ,
Կթոցընեն ճաշի պնակ,
Կքաշքըշեն իրար ականջ, բեղ ու մորուք՝
Իբրև զվարթ ուրախության անմեղ հանաք,-
Ու դեռ կերգե՛ն, կերգե՛ն, կերգե՛ն,
Կայրեն հոգի, սիրտ կմըրկեն...
Էհ, Վարդապե՛տ, ո՞վ չգիտի,
Էլ ուր մնաց դու՛ չիմանաս,

Որ հարսնահոր տնից պիտի
Դուրս գան սրանք ուրախ-խնդուն,
Ճափա ընկնեն դեպի ժամտուն,-
Ոմանք՝
Արդեն ետևառաջ «ութ գծելով»,
Ոմանք՝
Կանանց կոնակներին պագշոտորեն աչք գցելով,-
Պիտի գնան գյուղի ժամտուն,
Լսեն փոշոտ-մաշված խոսքեր գրաբարի՝
Հասկանալով իմաստը լոկ երկու բառի.
-Տե՞ր ես,որդեա՛կ...
Հազա՛ր անգամ տեսած մի ծես,
Սուրբ է թեպետ,
Բայց, Վարդապե՛տ,
Նույնքան ծանոթ ու տաղտկալի.
Վառվող մոմեր ու խնկի ծուխ,
Որոնց հոտից հաճախ կարծես
Մարդու քիթ է խտուտ գալիս,
Ուխտ պահանջող - երդում կնքող Ավետարան,
Որ մագաղաթ իր շուրթերն է իրար տալիս,
Բախտավորին օրհնանք դառնում,
Իսկ դժբախտին՝ ցմահ դարան...
Հարսանեկան բազմությունը տաք ալիքով
Հիմա արդեն, տե՛ս, հորդում է գավթից ժամի՝
Ճանապարհին կանգ առնելով դռների քով
Սեղան հանած մոտ ու հեռու բարեկամի:
Կարկըտում է ամբողջ թափով,
Կարկըտում է կոպալը, տե՛ս,
Եվ հավքերի երամի պես
Թռչկոտում են թղթե փողեր:

Զուռնան գծում մանրիկ օղեր
Ու ճարմանդով ելևէջի
Կապ է գցում, իրար հինում՝
Եղանակից շղթա շինում...
Եվ ընկնելով
Հանկարծակի բարիացած քամու վիզը՝
Քայլ է անում նաև խեղդված-կոնդված ձյունը:
Տեղ են հասնում:
Կրակվում են հրացաններ՝
Դեպի երկինք,
Որ կես մի ժամ
Ազատվել է մութ ամպերի ձեռքից դաժան:
Կրակվում են հրացաններ,
Եվ այդ անմեղ-անչարամիտ մահափորձից
Մեծահոգի երկինքն անքեն
Ո՛չ դատի է տալիս նրանց,
Ո՛չ էլ նույնիսկ պահում վրեժ,
Այլ ժպտում է կապո՛ւյտ-կապո՛ւյտ
Ու ծիծաղում մեծավարի.
Կրակոցը կարծես նրան
Պատճառել է միայն խտուտ:
Հարսանքատուն մտցընելիս
Թագավորի ու թագուհու գլխին
Վերից
Ցած է տեղում չամիչ-փշատ,
Նողուլ-նաբաթ,
Չիր ու չոր թութ՝
Կարկտախառն հորդ անձրևի խշխշոցով,
Եվ սերկևիլ, տանձ ու խնձոր՝
Զատկին ներկած ձվերի պես գունակ-գունակ:

Դռան շեմին
Թագավորի ու թագուհու ոտքերի տակ
Փշրվում է բոլոր ափսե մի սպիտակ,
Ինչպես լուսնի երկվորյակը՝
Խաղաղ լճում ներկված քարից,
Որ ցավ ու չոռ, անբախտություն հետը տանի...
Դե՛, Վարդապե՛տ, հիմա նրանք
Բաժակների չրխկոցին
Պիտի խառնեն հարսանեկան
Քեզ սիրելի ու դուրեկան
Փունջ-փունջ երգերը Ծաղկոցի
Քիչը՝ ծանոթ,
Շատը՝ նոր գյուտ,
Եվ բոլորը՝ ուշագրրավ:
Եվ իսկապես. հարսանքատան
Ծխոտ-մրոտ օճորքի տակ
Անկրկնելի եղանակով
Գովերգվում է թագավորի մահուդ չուխան,
Գուլպան պուտ-պուտ,
Քիրման գոտին,
Շապիկը շալ,
Ձին հրեղեն՝
Ինքն էլ վրեն.
-Աստծո՛ւ բարին
Մեր թագվորին,
Մեր թագվորին՝ թագն ի գլուխ:
Իսկ բքաշունչ ձմռան քամին
Չարանում է իր մտքի մեջ ու կատաղում,
Ինչ է թե, տե՛ս,
Հարսանքատան դուռն են ահա իր դեմ փակել,

Ու ոոպեն մեկ սկսում է դուռը թակել
Կամ ավլելով ձյան շեղջերը տանիքներից՝
Բաց երդիկից ներս է մաղում,
Բուռ-բուռ շաղում՝
Կարծես դիտմամբ ուտելիքն է անվերջ աղում,
Որ ամեն ինչ... չուտվելու չափ աղի լինի:
Օճորքի տակ հարսանքատան
Երգում են դեռ Գովքը փեսին:
Այնուհետև - այդպե՛ս - արդեն երգ են դառնում
Ու թագուհու բույրին իրենց հոտն են խառնում
Ճերմակ շուշան, ոսկեծաղիկ
Եվ վարդենիս,
Որոնց նման.
-Անուշ բուրեր քո թագուհին:
Կոշտ կոպալն ու վայրի զուռնան՝
Քնքուշ երգից ամաչելով՝
Ետ են քաշվել ու տեղ տվել,
Որ կարկաչեն դափ ու դուդուկ.
-Պնդուկի ծառ կապեր պնդուկ,
Էնոր նման պտկեք և դուք:
Բարեբանող երգը հիմա
Օրորվում է,
Շորորվում է
Այգու նման մի պտղաբեր.
-Խաղողի ուռ կոճակ կապեր,
Պտղեք դուք էլ էնոր նման:
Ու երգողի ձայնը ծորուն
Երգի ծայրը ետ ոլորում,
Ավարտում է՝ հանգույց տալով...
Ու տեսնում են դեմքերն իրենց

Օղի-գինով լի բաժակում,
Եվ կոնծելով նույն պահին հենց՝
Ավերում են դեմքերն իրենց
Ու հետևից շուտ ճաշակում
Կես թաս շորվա,
Մի ֆունտ գեր միս,
Եվ այնպիսի՛ ախորժակով,
Խեղճերն ասես սրբի նման
Պաս են պահել մի ողջ ամիս:
Դափ-դուդուկից հիմա արդեն ծայր է առնում
Նուրբ ու նազուն մի Ձեռնախաղ՝
Հարուցելով հիացագին «վա՛յ-վա՛յ... ա՛խ-ա՛խ»:
Հասակակից հարս-աղջկա հրմշտոցից սրտապնդած՝
Ձեմուչումով վեր է կենում
Մի թուխ-վարսեղ-հասուն աղջիկ,
Ու նազում է մի ամաչկոտ թուլ-թուլ ծիծաղ:
Շագանակե իր աչքերը պատսպարած թարթիչներով՝
Նա թափանցիկ իր ականջին
Պահ է տալիս անհնազանդ մի սև խոպոպ
Եվ կեսմարած քայլ է անում
Դեպի կենտրոն՝ պարաշրջան:
Եղանակը մոտենում է ու հեռանում:
Եվ որսալով մոտեցումը եղանակի՝
Իր ամոթն է անմիջապես նա մոռանում
Ու դալարուկ մեջքը իսկույն կեռ-մեռ անում,
Սահ է սահում,
Այնպե՛ս սահուն,
Որ մի վայրկյան.... ամենքի հետ՝
Դուդուկահարն ինքն էլ նույնիսկ շունչն է պահում...
Դյուրագրգիռ դափն է հանկարծ ընդոստ զարկում,

Ու դառնում է նվագն ահա է՛լ ավելի լարաթրթիռ,
Ձեռքերն, ասես թե խրտնելով, վեր թևարկում,
Հետո, կարծես ապահովված՝
Ետ են գալիս, թառում սրտին:
Իսկ ոտքերից մեկը՝
Կարծես գորովանքով՝ ապտակում է
Պաչ պահանջող գժուկ գորգին.
Մերթ կրունկով ու մերթ թաթով
Մանրիկ-մանրիկ տկտկում է,
Մինչդեռ մյուսը ինքն իր կարգին
Սահում է լուռ, սակայն հուզված,
Կարծես շոյում մաքուր խուզված
Խիտ մազերը նույն այդ գորգի:
Պարո՛ւմ է նա,
Եվ աչքերն են դառնում տամուկ:
Պարո՛ւմ է նա,
Եվ հագուստը խայտաճամուկ
Մերթ ծալեծալ, փոթ-փոթ գալիս,
Մատնիչորեն ցույց է տալիս
Իր թաքցրած ձևերը պերճ ու խելքահան,
Մերթ էլ կիտված ծալքերն ահա
Ետ են դարսվում,
Բացվում-պարզվում
Եվ վավաշոտ տղամարդկանց
Հայացքների նետերի դեմ
Կրկին դառնում մի յուրովի ազնիվ վահան:
Պարո՛ւմ է նա,
Վառո՛ւմ է նա,
Եվ բոլորը՝ մեծ թե պուճուր,
Մոռանում են հասակն իրենց,

Դուրս են ելնում տարիքներից,-
Եվ չափ տվող թունդ ծափերի ալիքներից
Արձանի պես անշարժացած նորահարսի
Քողն է ուռչում ու կուչ գալիս,
Ու նորատի հարսնաքրոջ
Զառ լաչակն է բաց-խուփ անում,
Ամեն անգամ մերթ՝ թաքցընում փոսիկն այտի,
Մերթ՝ դունչիկի ոսպանման խալը բանում:
Ծափ է տալիս մինչև անգամ նորափեսան՝
Մոռանալով, որ ուրիշի պսակ չէ սա,
Մոռանալով, որ ինքն այստեղ
Ոչ մակար է, ոչ էլ քավոր:
Իսկ նա... կարծես չի էլ լսում,
Ոտն է հազիվ գորգին քսում
Եվ շարժումով մի հարկավոր՝
Թե՛ նազելի, թե՛ հարգևոր,
Պտըտվում է կրունկներին,
Որից նրա շորը ճամուկ
Քիչ ուռչում է թեթև քամուց,
Հետո՝ կարծես ամաչելով՝
Նորից կպչում սրունքներին:
Եվ խելքամաղ ջահել տղերք,
Տղամարդիկ սիրակեղեք
Իրենց մատնող-դավաճանող աչքերն ահա
Թարթիչների սուտլիկ-մուտլիկ խաղով կոծկում
Եվ թուլական շրթունքներն են բռնի կոճկում...
Ա՛խ, Վարդապե՛տ, հիշո՞ւմ ես դու
Գարնանային այն օրն անցած,
Դաշտում դաղձ ու սիբեխ քաղող
Այն հարսներին, աղջիկներին,

Փախուստը քո դեպի պաղ խուց...
Վաղուց էր դա,
Վաղո՜ւց, վաղո՜ւց,
Հիշո՞ւմ ես դու,
Ա՜խ, Վարդապե՛տ,
Ո՞նց չհիշել,
Երբ ողջ գիշեր
Մի տանջալից ծանրը երազ քեզ տվայտեց,
Քեզ փարվելով՝ նաև խայթեց,
Խայթեց՝ ինչ-որ անուշ ցավով,
Անո՜ւշ-անո՜ւշ, ինչպես հիմա՝
Այս վայրկյանին...
Նույն վայրկյանին
Մի թուխ կտրիճ՝ մեջքին քամար,
Հագին չուխա մեջքապնդուկ,
Հնոցի պես բոց աչքերին
Ածուխի պես սև-սև կամար,
Հայացքը՝ լուրջ, դեմքը՝ հանդուգն,-
Արջի նման մեջ է գալիս,
Ծանրամարմին պտույտ տալիս,
Բայց... կոպալի տեղին հարված -
Նա՝ նվագին հավասարված,
Արջից հանկարծ վագր է դառնում՝
Թեթև ցատկով վեր է թրռնում
Ու թեև նա ոչ մի բանից
Ո՛չ կախվում է, ո՛չ էլ բռնում,
Բայց մնում է վեր՝ օդի մեջ:
Ու պարուհու
Սև հոնքերի երկաչքանի կոր կամրջով
Անց է կենում

Մոլորաքայլ մնջախաղի մի մտածում:
Հետո կամուրջն իր հոնքերի
Կշեռքի է նա վերածում
Եվ թույլ տալիս իր աչքերին,
Որ վեր ու վար նժար ճոճեն.
Մնջախաղով կշռում է նա
Նրա բախտը՝
Իր «հա»-ն ու «չէ»-ն...
Ու քայլում է աղջիկն այնպես զգուշորեն,
Քայլ է փոխում կարծես ոչ թե գետնի վրա,
Այլ սառույցի.
Ամա՜ն, հանկարծ չսայթաքի ու չընկնի վայր,-
Ցավը՝ ոչինչ, փակ տեղերը բաց կլինեն՝
Կդառնա խաղք ու խայտառակ:
Նույն այդ պահին
Տղան այնպես է կտկտում,
Այնպե՛ս արագ,
Կարծես սրա ոտների տակ, ընդհակառակն՝
Արդեն ոչ թե սահուն սառույց,
Այլ լոկ կրա՜կ,
Խարույկի մեծ շեղջ է փռած,
Եվ որպեսզի չայրի իրեն՝
Աշխատում է քիչ դիպցընել ոտքը գետնին
Ու շատ մնալ օդում՝ թռած...
Կոտրատվում է աղջիկն էլի ու նազ անում,
Եվ ժպիտը՝
Գարնանային երիժնակի ցողունի պես,
Որքան քաղցր է ու հյութալի - նույնքան՝ փշոտ:
Ու տեսնելով, որ աղջիկը չի հեզանում,
Պարեկ տղան, ցավը դեմքին, ցատկում է օդ,

Փլվում, գետինն է սասանում:
Ոտներն արդեն հաճախ-հաճախ
Թեք են տալիս մեկ աջ - մեկ ձախ,
Մինչ իրանը՝ գոտկատեղից՝
Չի էլ շարժվում անգամ տեղից:
Իսկ ձեռքե՞րը... մի կատարյալ,
Մի կատարյալ... ի՞նչ... գալարա՞նք.
Առաջ ու ետ, վերև-ներքև՝
Բան են որսում ասես նրանք,
Մերթ՝ բարկացած ու կատաղի,
Մերթ էլ հանկարծ տատամսում են ու վարանում,
Կարծես արդեն մթան մեջ են բան որոնում:
Նորից՝ ընդոստ.
-Տաշի-տուշի...
Հետո՝ հուշիկ.
-Հոպտտա-տմբա...
Եվ դառնում է պարն ավելի առույգ ու ժիր:
Ու պարեկի շալե թումբանն
Իր իսկ հանած հողմի առաջ
Փռփռում է՝ կարծես դառած
Դարբնոցի մեծ փուքսը կաշվե:
Հետզհետե մեծ ու փոքր ավելի են մոտիկանում,
Իրար սեղմված՝ պարողներին մտիկ անում,
Հետո սրտի ամբողջ տապով
Ծափ են տալիս պարի չափով
Ու պարն անվերջ տաքացընում.
-Սը՛-սը՛, սը՛-սը՛...
Իրենց դմբո էրիկներից դժգոհ կանայք
Մտքների մեջ կամ բացահայտ հոգոց հանում
Ու ձեռքերն են ցավով տանում

Իրենց կրծքին... ինչի՞ց ուռչող:
Մինչ պարեկը
Ձմռան պաղած հողն է - թը՛կ-թը՛կ - այնպես դոփում,
Մեխ է կարծես այնտեղ խփում՝
Իր ոտքերո՛վ, ոչ թե մուրճով.
Մինչ պարեկի ուսերը, տե՛ս, պար են պարում
Իր իրանից ու ոտքերից ասես անկախ ու ինքնավար,
Հոնքերն, ահա՛, պար են գալիս իրենց համար՝
Կամ շինելով, կամ քանդելով երկու կամար,
Պար են գալիս աչքերն՝ անջատ,
Դաստակը՝ ջոկ,
Թաթն՝ առանձին,
Ծունկը՝ ծալված,
Իրանը՝ ձիգ,
Գլուխն՝ ուղիղ,
Իսկ վիզը՝ թեք.
Բոլորն՝ անջատ ու առանձին,
Բայց և այնպես՝ բոլորը մեկ,-
Նույն ժամանակ
Շիվ աղջկա թևիկները, աղավնու պես,
Մերթ տեսնում ես՝ քիչ է մնում թառեն գետնին,
Ասես սրսուռ կուտի վրա,
Մերթ էլ տեսար՝ վեր են սուրում,
Ճախր են տալիս,
Հետո, ինչպես բույնի շորս կողմ,
Գլխի շուրջն են պտույտ գալիս,
Ու վերջում էլ,
Երբ նազելի մի շարժումով կանգ են առնում,
Խոնարհաբար գլուխ տալիս՝
Իբրև նշան ներողության,

Որ դադարում են պարելուց,-
Ձեռքերն այնժամ հեզ ու հլու՝
Երկու հոգնած աղավնու պես՝
Թևը ծալած կուչ են գալիս,
Որ անհանգիստ-վայրիվերող կրծքի վրա
Հանգստանան,
Մինչդեռ տղան վերջին անգամ
Ոտքի վրա օդակ տալով՝
Ցատկում է վեր,
Յոթ-ութ վայրկյան օդում մնում արձանացած
Եվ, քարի պես, ընկնում է ցած՝
Ընկած տեղը ծնկի գալով...
Ու հնչում է կենաց մի նոր՝
Թագվորահոր,
Թագվորամոր
Կա-չկայի, ծետ ու պետի:
Ա՛խ, Վարդապե՛տ, հիմա պիտի
Պատկառելի մի նոր տաղով
Կանչեն փեսի պապ ու տատին,
Հորն ու մորը,
Քուր-ախպորը՝
Ամեն մեկին մի տուն խաղով.
-Որ գան նստեն, դարպաս անեն,
Ծնրիկ զարկեն սուրբ սեղանին,
Հրամմեն բարին մեր թագվորին...
Հետո արդեն մի բաղաձայն կատակասեր,
Սկսելով զավեշտական իր խաղն ասել՝
Գովքի դիմաց պիտի չուզի, այլ պահանջի՝
Փեսահորից՝
Սել մի սեղան...

Փեսախպորից՝
Խոյ մի խորվու...
Փեսաքուրից՝
Գուլպա յոթ ջուխտ՝
Իմանալով, որ կստանա
Իր խոպաձայն երգի դիմաց,
Երկու ճնճուղ,
Մեկ գարեհաց...
Հետո պիտի կարգով հնչեն
Կարգի դրված հազար կենաց
Ավանդական ու կրկնվող՝
Համեղ թեպետ,
Բայց չփոխվող ճաշերի պես հոգնեցուցիչ,
Որ և սրանք պիտի կուլ տան
Թունդ օղիով, գինով անուշ
Ու հետադարձ ճամփան թակեն
Խաշլամայի պատառներով:
Դեռ, Վարդապե՛տ, դու կտեսնես
Ալիք-ալիք ծփան Շորոր,
Ապա Նազպար,
Եվ, հակառակ իր իսկ կամքին,
Մի կաքավող աղջիկ կամ կին,
Ա՜խ, Վարդապե՛տ,
Մինչև անգամ վարդապետին կուսակրոն
Հիշել կտա... պիղծ մի ջաննաթ՝
Մեր անալի դրախտի տեղ,
Հիշել կտա պիղծ մի ջաննաթ՝
Խարդավանքով անգո չարի:
Հետո... ապա...
Դեռ կա Դարձպար,

Կա Թոնոցի, կա Քոչարի,
Երբ սկզբում կոնաբոնուկ՝
Քիչ ծալվելով,
Շատ տարվելով,
Հետո արդեն թևատըրուկ՝
Շեշտով հատու և կտրրուկ
Դեպի առաջ քիչ են տարվում,
Այլ մոտեմոտ ծնկածալվում,
Ասես իրար ուժ գումարած,
Մի սի՛րտ, մի կա՛մք, մի մա՛րդ դառած՝
Աչքի համար անտես մի պատ
Պիտի քանդեն իրենց ուսով.
Հետո, հանկարծ, ամբողջ ուժով,
Ասես իրար խիստ կարոտած՝
Պիտի ամուր գրկեն իրար
Մեջք ու իրան
Եվ թի՛ռ՝ թոչեն մեջքագրկուկ:
Եվ ժամանակ առ ժամանակ՝
Իր կոպալի զարկերի հետ
Խաղացնելով ողկույզի պես գոռոզ բաշը,
Խմած գինուց ու եռանդից կարմրատակած՝
Աքլորի պես կծղրտա գեր դհոլչին.
-Այ շաբաաաաաա՛շ - հա,-
Ու փութաջան թքոտելով թուման-տասնոց՝
Կկպցընի իր ճակատին
Կամ կխրի գդակի տակ՝
Կեսը կախած իր ծոծրակի,
Իր հոնքերի, դեմքի վրա՝
Թղթե գունե ծոպքերի պես:
Եվ կըտնի դա մինչև լույս,

Մինչև բարի աղոթարան,
Երբ որ Պարոն աքլորն, իզո՛ւր,
Երբ որ Տիկին հավերն, իզո՛ւր,
Ուժ պիտի տան կոկորդներին՝
Հայտարարեն լույսը բացված,
Ու չլսեն իրենց ձայնը անգամ իրենք՝
Դհոլ-զուռնի զորությանը կուլ գնալով...
Ա՛խ, միամի՛տ իմ պապերի
Մանկաբարո ուրախություն,
Որ տևում էր յո՛թ օր-գիշեր,
Որ անցնում էր երգ ու պարով,
Կռիվներով գինեհարույց,
Ու հաշտությամբ գինեմիջնորդ...
Ա՛խ, միամի՛տ իմ պապերի
Մանկաբարո ուրախություն
Սերմի առթիվ՝ դեռ չցրված,
Մանկան առթիվ՝ դեռ չծնված...
Ա՛խ, անգիտա՛կ իմ պապերի
Բնապարգև հարստություն
Հազար երգ ու եղանակի,
Որ չունեին տեր-տնօրեն
Ու զուրկ էին հեղինակից.
Անհատնելի մի գանձանակ,
Որ շաղ տալիս անփութորեն,
Ցրում էին հայ գյուղացիք
Իրենց մաքուր շրթունքն ի վար՝
Ինչպես որ միշտ և ամենուր,
Այս անգամ էլ հարսանեկան
Ուրախության այս առիթով՝
Ցանկանալով սե՛ր, միությո՛ւն, երջանկությո՛ւն,

Բոլորովին մոռանալով այդ վայրկյանին,
Որ հեշտորեն չի կատարվում ամեն մաղթանք,
Որ կարող է նաև լինել...

ՂՈՂԱՆՋ ՄՐՄՈՒՌԻ

Իսկ թե լիներ - աստվա՛ծ չանի -
Իսկ թե հանկարծ այնպե՛ս լիներ,
Որ այգու պես անուշ բուրող նորահարսի առագաստում
Գառի նման մշմըշալով
Ամեն գիշեր հանգիստ քներ
Ընդամենը մի տասներեք գարուն տեսած նորափեսան՝
Մեջքը հարսին, դեմքը պատին,-
Այնժամ պիտի հարսն ի՞նչ աներ:
Ա՛խ, նա ինչպես բութ մանգաղին անվերջ քսվող անյուղ հեսան,
Քար էլ լիներ՝ խարտվե՛ր պիտի,
Փոշի՛-փոշի՛ պիտի մաշվեր,
Եվ ձեռն ի ծոց ու վիզը ծուռ՝
Մի խուլ անկյուն պիտի քաշվեր,
Գրտնակի պես լիք ու լխտիկ իր թևերը հոշոտելով,
Անիծելով իր բախտը սև,
Երազելով զգվանք ու սեր՝
Պիտի երգեր ողի՛կ-ողի՛կ.
-Իմա՛լ էնեմ, իմա՛լ չենեմ,
Յար պստիկ ա, շիվարե՛լ եմ...
Իսկ թե՝ լիներ, այնպե՛ս լիներ,
Որ ընջավոր
Ու փընջավոր՝
Ծամո՛վ մեկին,
Որ կարճըլիկ

Ու կարճուլիկ՝
Համո՛վ մեկին
Օր ծերության դարձներ կին
Մի անատամ կծու խոջա-
Քիթը՝ բարդան, ոտքը՝ քոթուկ,
Աչքը՝ ճպիռ, վիզը՝ ճոճան...
Իսկ թե լիներ, այնպե՛ս լիներ,
Որ լի տունն իր վանդակ շիներ
Ու այդ ոսկե նեղ վանդակում
Փակեր կաքավ մի կլորիկ՝
Մի սիրավոր
Ու վիրավոր
Եվ սևավոր
Անբախտ լորիկ,-
Իսկ թե ահա այսպե՛ս լիներ,
Այդ օր մահու քավթառի հետ
Նույն չոր բարձին
Լերկ գլխի դեմ վարսեղ գլուխն ինչպե՞ս դներ,
Ծմակի պես պաղ այդ ծոցում ինչպե՞ս քներ,
Կրակ կողերն ինչպե՞ս հպեր լուլա-սառցին,
Ինչպե՞ս, ինչպե՞ս մալուլ երգով ծունկ չծեծեր,
Ծամկտրածը իր մարեին ո՞նց չանիծեր,
Ինչպե՞ս չասեր, որ նա արեց իր բախտն ավեր,
Զահել սրտում կրակի պես վառեց ցավեր.
Արար-աշխարք լիքը լավեր՝
Ինչո՞ւ թողեց կտրիճ քաջին,
Ինչո՞ւ տվեց քավթառ խոջին.
-Իմ կեղտ էնոր մեղրի միջին,
Էնոր ոսկուն նստեն հավեր,
Քա մարե՛ ջան, քա տնավե՛ր...

Իսկ թե տային ո՛չ թե հարուստ բայց ծեր խոջի,
Այլ հենց մի լավ՝ սրտով սիրած ջահել քաջի,
Մինչև անգամ չոր քարի տեղ խսիր տային,
Չոր գետնի տեղ տային նաև մաշված կարպետ,
Է՜հ, Վարդապե՛տ,
Ի՜նչ է, պիտի բախտավորված հա խնդայի՞ն:
Չէ՜, Վարդապե՛տ,
Աղքատության ճանկը չընկնի մինչև անգամ քո թշնամին...
Հարսանիքի դհոլ-զուռնան դեռ չլռած,
Եվ պահունի շորերն անգամ սնդուկի մեջ դեռ չդրած՝
Պանդխտության անգութ քամին,
Հարսի ծոցից նորափեսին փրցընելով
Եվ քարեքար ու սարեսար թոցընելով՝
Իր սիրածի անուշ համին
Բաժանումի դառնությունն է արդեն խառնում.
Գնում է նա
Եվ... մի՛ տարի, երկո՛ւ, երե՛ք... ետ չի դառնում:
Եվ կարոտից ու տանջանքից,
Անկարելի անրջանքից
Մարմինն ասես վերք է դառնում համատարած
Ու նվո՛ւմ է, տնքո՜ւմ, ցավո՜ւմ:
Սերն է մխում կուրացուցիչ-դառը ծխով,
Ինչպես ծառից հենց նոր ջարդված - խարույկ դառած
Թաց ոստերը՝ անթթվածին քարանձավում...
Անկողինն է հարսին այրում կրակի պես,
Օրն է մթնում, իսկ իր սերը տուն չի գալիս:
Եվ
-Էս անտեր բարձի վրա
Առանց յարի քո՜ւն չի գալիս...
Ու վերքերը դառնում են երգ,

Ու երգերը դառնում են վերք,
Ու սրտերը՝ ծանրը մի քար,
Երբ զինվոր են տանում յարին.
-Ա՛խ, երթար ու էլ ե՛տ չգար
Քեզի սոլդաթ գրած տարին...
Երբ չեն տալիս յարը յարին,
-Որ ախ էնեմ, կուգա արի՞ն...
Երբ խախտում են խոսք ու երդում.
-Տաք արի՞նն է մեջս լերդում...
Երբ...
Վարդապե՛տ, ի՞նչ էիր դու.
Մորից ծընված հող հո չէի՞ր,
Որ լուռ ու մունջ ներծրծեիր
Անձրև ու ջուր,
Եղյամ ու ձյուն,
Կարկուտ ու ցող
Թե լինեիր մինչև անգամ անլեզու հող,
Այս ամենը ինչպե՞ս և ո՞ւր հոգիդ տաներ:
Չէ՞ որ հոգիդ պիտի մի օր
Պոռթկա՛ր,
Որպես մի արտեզյան խորունկ ջրհոր,
Ժայթքե՛ր,
Չորս դին ցրեր ցայտքեր,
Ծիածանված շատրվանե՛ր...